

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում n° թվով է նշված հարավային ցուրտ ջերմային գոտին.




- 1) 2
- 2) 4
- 3) 5
- 4) 1

2 Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 250 000
- 2) 1 : 2 500 000
- 3) 1 : 25 000 000
- 4) 1 : 25 000

3 Նկարում \varnothing կետը հորիզոնի n° կողմում է.

- 1) հյուսիսարևմտյան
- 2) հարավարևմտյան
- 3) հարավարևելյան
- 4) հյուսիսարևելյան



4

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Իր առանցքի շուրջը Երկիրը պտտվում է 1 ժամում:
- 2) Միջօրեականներն իրար հավասար են:
- 3) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է Գրինվիչի միջօրեականով:
- 4) Երկիրը սեփական լույսը ստանում է Լուսնից:

5

Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում է կործանիչ ալիք, որը կոչվում է.

- 1) ցիկլոն
- 2) ցունամի
- 3) մակընթացություն
- 4) տեղատվություն

6

Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոբար
- 2) իզոթերմ
- 3) իզոհիպս
- 4) իզոբաթ

7

Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) հորիզոնական գոնայականություն
- 2) աշխարհագրական թաղանթ
- 3) ջերմաստիճանային շրջադասություն
- 4) վերընթաց գոտիականություն


8

Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը – 14° է, իսկ նույն պահին ստորոտում + 4°: Օդի ճնշումը գագաթին 380 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել 6°-ով).

- 1) 365 մմ
- 2) 395 մմ
- 3) 680 մմ
- 4) 80 մմ


9 Նկարում Ա տառով նշված է Երկրի.

- 1) միջնապատյանը
- 2) թույլլուրտը
- 3) երկրակեղևը
- 4) միջուկը



10 Նկարում պատկերված է.

- 1) գիշերային բրիզ
- 2) ցերեկային բրիզ
- 3) ձմեռային մուսսոն
- 4) ամառային մուսսոն



11 «Հարթավայր — աշխարհամաս» գույգից ընտրել *սխալը*.

- 1) Դեկանի — Ասիա
- 2) Հյուսիս-Գերմանական — Եվրոպա
- 3) Լենքորանի — Եվրոպա
- 4) Միջագետքի — Ասիա

12 Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.

- 1) տափաստանը
- 2) անապատը
- 3) տունդրան
- 4) սավաննան

13

Բնութագրումով որոշել թերակղզին.

Այդ թերակղզին Հարավային Եվրոպայում է: Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան, արևելյանը՝ Ադրիատիկ ծովերի ջրերը: Հարավում այն նեղուցով անջատվում է Միցիլիա կղզուց: Ո՞ր թերակղզին է.

- 1) Ապենինյան
- 2) Բալկանյան
- 3) Փոքր Ասիա
- 4) Պիրենեյան

14

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:
- 2) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ գրոյական միջօրեականն է:
- 3) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
- 4) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արևադարձային օդային զանգվածներն ունեն վարընթաց շարժում. իջնելիս տաքանում են և չորանում:
- 2) Արկտիկական և անտարկտիկական օդային զանգվածները չոր են, ցուրտ և շատ թափանցիկ:
- 3) Մերձհասարակածային կլիմայական գոտի ամռանը թափանցում են արևադարձային չոր ու շոգ, իսկ ձմռանը՝ բարեխառն խոնավ և մեղմ օդային զանգվածները:
- 4) Հասարակածային կլիմայական գոտում օդի ջերմաստիճանը միշտ բարձր է, իսկ տեղումների քանակը՝ շատ:

16

«Լիճ — թափվող գետ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Վանա — Եփրատ
- 2) Կասպից — Վոլգա
- 3) Տիտիկակա — Ամազոն
- 4) Մեծ աղի — Կոլորադո

17

«Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Յանգզի — գարուն
- 2) Օրինկո — ամառ
- 3) Նիգեր — ձմեռ
- 4) Տիգրիս — ձմեռ

18

Ավստրալիայում ամենաշատ խոնավություն ստանում է (են).

- 1) մայրցամաքի ներքին շրջանները
- 2) մերձհասարակածային գոտին՝ հասարակածային մուսսոնների տեսքով թափանցած պասսատների շնորհիվ
- 3) Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լեռնալանջերը
- 4) Էյր լճի ավազանը

19


Ո՞ր կղզիներն են քարտեզում նշված Դ տառով.

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Բերմուդյան
- 3) Մեծ Անտիլյան
- 4) Փոքր Անտիլյան

20

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Բուենոս Այրես
- 2) Լիմա
- 3) Սանտյագո
- 4) Մոնտեվիդեո



21

Բնակչության աշխատունակ մասը, աշխատող մեծահասակներն ու երեխաները, որոնք իրենց ֆիզիկական կարողություններով, գիտելիքներով և փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ բնագավառում, կոչվում է.

- 1) ռասա
- 2) աշխատանքային ռեսուրս
- 3) տնտեսապես ակտիվ բնակչություն
- 4) ժողովուրդ

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Քոչվոր տարաբնակեցումն առկա է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում:
- 2) Ցրված տարաբնակեցումն առավել տարածված է ագարակային (ֆերմերային) գյուղատնտեսություն ունեցող երկրներում:
- 3) Ժողովրդագրական գործոնը տարաբնակեցման վրա չի ազդում:
- 4) Տարաբնակեցումը որոշակի տարածքում ձևավորված արտադրական ձեռնարկությունների ամբողջությունն է:

23

Բնութագրումով որոշել պետությունը.

Գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.

- 1) Ավստրալիա
- 2) Իրան
- 3) Բրազիլիա
- 4) Չինաստան

24

Երկրի բնակչության թիվը 20 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 5 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 35 %
- 2) 50 %
- 3) 75 %
- 4) 20 %

25

«Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) իսպանացի — ռոմանական
- 2) տաջիկ — թուրքական
- 3) անգլիացի — գերմանական
- 4) ուկրաինացի — սլավոնական

26

Տրվածներից ո՞րը ցամաքային սահման ունի միայն մեկ երկրի հետ.

- 1) Հունաստանը
- 2) Իսպանիան
- 3) Պերուն
- 4) Կանադան

27

Թելառու տեխնիկական մշակաբույսեր են.

- 1) սոյան և ձիթապտուղը
- 2) բամբակենին և վուշը
- 3) գարին և բրինձը
- 4) արևածաղիկը և ցորենը

28

Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Սև մետաղների հումքի աղքատ պաշարների պատճառով երկրում զարգացած չէ սև մետաղաձուլությունը:
- 2) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը բրինձն է:
- 3) Բնակչության սննդակարգի մեջ մեծ է ձկան ու ծովային մթերքների բաժինը:
- 4) Մեքենաշինության ճյուղային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նավաշինությունը, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական մեքենաշինությունը:

29

Բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների բաժինը համեմատաբար մեծ է.

- 1) Իրանում և Պակիստանում
- 2) Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում
- 3) Թուրքիայում և Հունաստանում
- 4) Չինաստանում և Հնդկաստանում

30 **Բացարձակ միապետություններ են.**

- 1) Սաուդյան Արաբիան և Բրունեյը
- 2) Իսպանիան և Ճապոնիան
- 3) Գերմանիան և Ավստրալիան
- 4) Ռուսաստանը և Ֆրանսիան

31 **Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.**

- 1) Ֆրանսիան և Հունաստանը
- 2) Հնդկաստանը և Շրի Լանկան
- 3) Ուզբեկստանը և Թուրքիան
- 4) Կոլումբիան և Ինդոնեզիան

32 **«Գետ — ավազան» գույգերից ընտրել սխալը.**

- 1) Ճորոխ — Սև ծով
- 2) Արաքս — Կասպից ծով
- 3) Կուր — Միջերկրական ծով
- 4) Եփրատ — Պարսից ծոց

33 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Կիսաանապատային գորշ հողերը հումուսով աղքատ են:
- 2) Մարգագետնատափաստանային հողերը հումուսով հարուստ են:
- 3) Լեռնաանտառային գորշ հողերը հումուսով ավելի հարուստ են, քան կիսաանապատային գորշ հողերը:
- 4) Լեռնային սևահողերում հումուսի պարունակությունը 1–2% է:

34 **Հայերը կազմում են ՀՀ բնակչության.**

- 1) 90 %-ը
- 2) 96 %-ից ավելին
- 3) 88 %-ը
- 4) 93 %-ը

35


ՀՀ տրանսպորտի բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է.

- 1) տրանսպորտային նոր միջոցների շահագործմամբ
- 2) բեռների ծավալի և ուղևորների թվաքանակի աճով
- 3) տրանսպորտային նոր ուղիների արագ կառուցմամբ
- 4) փոխադրումների հեռավորության աճով

36

Ո՞ր ջրամբարն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Կեչուտի
- 2) Սպանդարյանի
- 3) Շամբի
- 4) Տոլորսի



37

Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Ջերմուկ
- 2) Եղեգնաձոր
- 3) Վայք
- 4) Վեդի

38

Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Բրազիլիան և Կանադան
- 2) Սաուդյան Արաբիան և Իրաքը
- 3) Ուկրաինան և Հայաստանը
- 4) Ճապոնիան և Չինաստանը

39

Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր է.

- 1) ավտոտրանսպորտը
- 2) լեռնային ապարների քայքայումը
- 3) փոշեհողմը
- 4) հրաբուխը

40

Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու Երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.

- 1) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 2) ջերմաստիճանի տատանման լայնույթ
- 3) ջերմոցային տնտեսություն
- 4) ջերմոցային էֆեկտ

41

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- | | |
|-------------|------------|
| 1) Օրանժ | 5) Ինդոս |
| 2) Նիգեր | 6) Մեկոնգ |
| 3) Սիրդարյա | 7) Զամբեզի |
| 4) Մուրեյ | 8) Տիգրիս |

42

Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին.

- | | |
|--------------|-------------|
| 1) Նորվեգիա | 5) ԱՄՆ |
| 2) Լիտվա | 6) Գերմանիա |
| 3) Ուկրաինա | 7) Ֆրանսիա |
| 4) Ռուսաստան | 8) Կանադա |

43

Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի լեռնագրական միավորների համարները.

- | | |
|------------------------|---------------------------|
| 1) Գեղամա լեռնազանգված | 5) Աչքասար լեռ |
| 2) Թոնդրակ լեռ | 6) Ախալքալաքի սարավանդ |
| 3) Կապուտջուղ լեռ | 7) Ծղուկ լեռ |
| 4) Ծաղկանց լեռներ | 8) Բյուրակնի լեռնազանգված |

44

Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով.

- 1) Ռուսաստան
- 2) Կանադա
- 3) ԱՄՆ
- 4) Չինաստան

ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
- 2) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 3) ՀՀ-ում կլիմաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 4) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 5) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
- 6) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Բ մակարդակ

46 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրագնդի ամենամեծ շրջագիծը գլխավոր միջօրեականն է:
- 2) Գնդաձևության շնորհիվ հասարակածից դեպի բևեռներ ջերմությունն աստիճանաբար նվազում է:
- 3) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը բևեռային շրջաններում «փքվել է», իսկ հասարակածում՝ սեղմվել:
- 4) Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող գուգահեռականն ընդունված է անվանել հասարակած:

47 Ո՞ր լայնություններին են բնորոշ ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման մարզերը.

- 1) բարեխառն և հասարակածային լայնություններին
- 2) արևադարձային և բարեխառն լայնություններին
- 3) հասարակածային և արևադարձային լայնություններին
- 4) արկտիկական և արևադարձային լայնություններին

48 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:
- 2) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:
- 3) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:
- 4) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:

49

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մուսսոնային կլիմա ունեցող շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 2) Տորնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 3) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 4) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:

50

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ավստրալական պլատֆորմը արևելքից եզրավորված է երիտասարդ ծալքավոր լեռներով:
- 2) Բրազիլական սարահարթում գերիշխում են սառցադաշտերի գործունեությամբ առաջացած մակերևույթի ձևերը:
- 3) Աֆրիկյան պլատֆորմը զբաղեցնում է միայն մայրցամաքի ծայր հյուսիս-արևմտյան նեղ ծովափնյա մասը:
- 4) Անտարկտիկական Անդերը ալպյան հասակի լեռներ են:

51

Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.

- 1) Ճապոնիան և Կորեան
- 2) ԱՄՆ-ը և Գերմանիան
- 3) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 4) Չինաստանը և Մոլդովան

52

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Չարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
- 2) Չարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 3) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
- 4) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:

53

«Անասնապահության ճյուղ — առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) ոչխարաբուծություն — Ֆինլանդիա
- 2) խոզաբուծություն — Թուրքիա
- 3) մսատու անասնապահություն — Արգենտինա
- 4) կաթնային անասնապահություն — Ալժիր

54

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, ռոբոտներ արտադրող առաջատար երկիր է:
- 2) Յուրացված ու բերրի տարածքներից է Հարավկասպիական դաշտավայրը:
- 3) Անապատային, կիսաանապատային ու լեռնային շրջաններում զբաղվում են ոչխարաբուծությամբ:
- 4) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:

55

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ է ջեկերի բաժինը:
- 2) Աճեցվող հիմնական հացահատիկային մշակաբույսը բրինձն է:
- 3) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթրն է:
- 4) Բնորոշվում է բնակչության պարզ վերարտադրությամբ:

56

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական լեռնաշխարհն արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:
- 2) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:
- 3) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
- 4) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:

57

Ընտրել «գետ — վտակ» համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------|-----------|
| 1. Դերեղ | ա. Գետիկ |
| 2. Աղստև | բ. Քասաղ |
| 3. Արփա | գ. Փամբակ |
| 4. Մեծամոր | դ. Եղեգիս |

- 1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-գ
- 3) 1-ա, 2-բ, 3-ա, 4-գ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

58

ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունն ամենաբարձրը.

- 1) 2000–2500 մ
- 2) մինչև 1000մ
- 3) 1500–2000 մ
- 4) 1000–1500 մ

59

«Հանքավայր — օգտակար հանածո» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Շվանիձոր — նեֆելինային սիենիտ
- 2) Սվարանց — երկաթաքար
- 3) Ագարակ — պղնձամոլիբդեն
- 4) Կապան — պղնձամոլիբդեն

60

Վայոց ձորի մարզի համար n^o ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածքում հայտնաբերվել են պղնձամոլիբդենային հարուստ հանքավայրեր:
- 2) Բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
- 3) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
- 4) Բնական անտառների զբաղեցրած մակերեսը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է:

61

ՀՀ տրված լճերի համարները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ.

- 1) Սև
- 2) Արփի
- 3) Քարի

62

Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- | | |
|-----------|-------------|
| 1) Արարատ | 5) Շամլուղ |
| 2) Ախթալա | 6) Ալավերդի |
| 3) Սոթք | 7) Քաջարան |
| 4) Կապան | 8) Ագարակ |

63

Գրել այն երկրների համարները, որտեղ բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է.

- | | |
|--------------|--------------|
| 1) Նորվեգիա | 5) Բանգլադեշ |
| 2) Կամերուն | 6) Տաջիկստան |
| 3) Անգոլա | 7) Ճապոնիա |
| 4) Հնդկաստան | 8) Նիգեր |

64

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-------------|-----------------|
| 1) Ուկրաինա | 5) Գերմանիա |
| 2) Ճապոնիա | 6) Կանադա |
| 3) Լեհաստան | 7) Նոր Զելանդիա |
| 4) Իրան | 8) Արգենտինա |

65

Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. է. 40° -ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. է. 70° -ի: Որոշել քաղաքների ամենակարճ հեռավորությունը կիլոմետրով:

(66-67) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝
 $-1^\circ, -4^\circ, -6^\circ, -2^\circ, 7^\circ, 16^\circ, 10^\circ, 4^\circ$:

66

Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

67

Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

(68-69) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 %: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ:

68

Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

69

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 2) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 3) ՀՀ-ն իր հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
- 4) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
- 5) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
- 6) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը: